ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ 1. «Հանելուկների դասավանդման արդյունավետության բարձրացումը գրաճանաչության շրջանում»,

2. «Հեքիաթի ուսուցման նոր մեթոդներ»:

Հետազոտող ուսուցիչ՝ Վարդանյան Աստղիկ, ՀՀ Կոտայքի մարզի Կաթնաղբյուրի հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Հանելուկների դասավանդման արդյունավետության բարձրացումը գրաճանաչության շրջանում……4

Հեքիաթի ուսուցման նոր մեթոդներ……13

Եզրակացություն……...……20

Օգտագործված գրականության ցանկ……..……22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի հետ փոխվում են ուսուցման ձևերն ու մեթոդները: Դրանց զարգացումն ու կատարելագործումն ուսուցչին մղում է պրպտելու և գտնելու նորանոր եղանակներ, որոնք կնպաստեն ուսուցման արդյունավետության աճին և սովորողների ակտիվացման:

Վերապատրաստման դասընթացների շրջանակներում՝ արդեն երեք տարի է, ինչ աշխատում ենք նոր մեթոդներով: Խորապես զգացել ենք դրանց առավելությունը, սակայն դժվարանում էինք գործադրել գրաճանաչության շրջանում: Այս հարցում օգնության հասան ժողովրդական բանահյուսության ժանրատեսակ դիտվող հանելուկները, որոնք բոլոր ժամանակներում ծառայել ու ծառայում են մարդակային խելքն ու հնարամտությունը զարգացնելու նպատակին: Դասի ժամանակ հանելուկների առաջադրումը առաջ է բերում աշխուժություն, մտքի շարժ և թարմություն: Այդ միջոցն ակտիվացնում է նույնիսկ ամենապասիվ երեխաներին, զարգացնում տրամաբանությունը, մտածողությունը, երևակայությունը: Հանելուկների օգնությամբ երեխան կարող է ճանաչել բնության օրենքներն ու երևույթները, իրերը, առարկաները, կենդանիներին և դրանց բնորոշ հատկությունները: Հանելուկների պատասխանների գտնումը նպաստում է նաև երեխաների աշխարհայացքի ձևավորմանը, կռահելու, արագ կողմնորոշվելու ունակությունների զարգացմանը, արտահայտիչ կարդալու և արտասանելու կարողությունների հղկմանը, ինչպես նաև ուսումնական նյութի բովանդակության ընկալման խորացմանը:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Այբուբենը հանելուկներով ներկայացրել են բազմաթիվ հայ հեղինակներ:

Դեռևս միջնադարում Ներսես Շնորհալին գրել է « Առակս վասն ուրախության մանկան» շարքը, ուր հանելուկների պատասխաններում պահպանվել է գրերի հաջորդականությունը: Գրաճանաչության շրջանի համար դասարանում ստեղծվել է «Այբուբենը՝ հանելուկներում» հավաքապաստառը, որի գրպանիկներում տեղադրված են բոլոր հնչյուն- տառերով սկսվող պատասխաններով հանելուկներ: Դրանց հակառակ երեսներին տվյալ հանելուկի պատասխան-նկարն է: Հանելուկներով ու դրանց պատասխան- պատկերներով լի հավաքապաստառը գրաճանաչության փուլի համար ստեղծված մի իսկական հարուստ դիդակտիկա է: Զննական միջոցների և խոսքի ճիշտ զուգակցմամբ էլ պայմանավորվում է ուսումնական նյութի յուրացման պահանջ-վող մակարդակի ապահովումը: Թեև տարրական դասարանների դասագրքերում հանելուկները ներկայացված են որպես երկրորդական նյութ, սակայն գրաճանաչության շրջանում մեզ համար դրանք առաջնային նշանակություն և կարևորություն են ձեռք բերում: Այս հավաքապաստառն ուղեկցում է մեզ գրաճանաչության ամբողջ ընթացքում:

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է
Ը	Թ 	Ժ	Ի	Լ	Խ	Ծ
Կ	Հ	Ձ	Ղ	Ճ	Մ 	Յ
Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ	Ռ
Ս	Վ	Տ	Ր	Ց	ՈՒ	Փ
Ք	Օ	Ֆ				

Հավաքապաստառն օգտագործում ենք և՛ մինչ նոր տառին ծանոթացնելը, և՛ նոր հնչյուն –տառը յուրացնելուց հետո: Նոր տառի հաղորդման սկզբում ստեղծում ենք այնպիսի իրավիճակ, ուր երեխաներն իրենք կգուշակեն , թե որ հնչյուն տառին

են ծանոթանալու: Հայտնի է, որ երեխաների համար առավել դժվար է երկհնչյուն տառերի յուրացումը: ՈՒստի ներկայացնենք ե երկհնչյուն տառի ուսուցման մեր փորձը: Նախօրոք՝ մինչև դասն սկսելը, դասասենյակում կախում ենք մի պարան : Այս հնարին նրանք արդեն ծանոթ են նախորդ տառերի ուսուցումից և շատ են սիրում այս եղանակով աշխատանքը: Նոր նյութի հաղորդման սկզբում հավաքապաստառի Ե գրպանիկից հանում ենք բոլոր հանելուկ- պատկերները և ասում.

-Սիրելի՛ երեխաներ, այսօր մենք ծանոթանալու ենք մի նոր հնչյուն-տառի:

Դուք ինքներդ պետք է գուշակեք, թե որն է այն: Դրա համար հարկավոր է գտնել առաջադրված հանելուկների պատասխանները:

Մինչ հանելուկի առաջադրումը առանձնացնում ենք այն բառերը, որոնց մասին պատմում է դասագրքի համապատասխան դասը: Կարդում ենք առաջին հանելուկը:

Դուք բոլորդ գիտեք նրան,
ՈՒնի ճկուն, բարակ իրան,
Բնակվում է ճահիճներում
ՈՒ ձեզ համար սրինգ դառնում:

Հետևում է երեխաների պատասխանը.

-Եղեգ:

Ցուցադրում ենք եղեգի պատկերը և հարցնում , թե ինչ գիտեն դրա մասին:

Հետևում են պատասխանները.

-Աճում է ճահիճներում:

-ՈՒնի երկար և բարակ ցողուն:

-Անվանում են նաև շամբ, բամբուկ:

- Դրանից գործում են զամբյուղներ, սակառներ /սալաներ/:

- Պատրաստում են շվի:

- Եղեգով ծածկում են կտուրները:

- Եղեգն այրվում է և կարող է ճրագի դեր կատարել:

Ավելացնում ենք ,որ այն վայրերը , ուր շատ եղեգ կա, անվանում են եղեգնուտ:

Ծանոթացնում ենք եղեգ անունով բնակավայրերին՝ Եղեգնաձոր, Եղեգնուտ:

Պատմում ենք « Եղեգնուհին» հեքիաթի՝ վիթի գեղեցկություն ունեցող հերոսուհու մասին:

Այնուհետև հարցնում ենք, թե ինչ հնչյուն լսվեց այս բոլոր բառերի սկզբում:

Երեխաները պատասխանում են.

-Յէ:

Հանելուկի պատասխան- նկարն ամրացնում ենք պարանին և ընթերցում հաջորդ հանելուկը:

Կանգնել է նա՝ հագած, կապած,
Կրծքին ոսկե վարսեր թափած,
Ամեն շորի ծալքի տակին՝
Շարան-շարան քարեր անգին:

Երեխաները պատասխանում են.

- Եգիպտացորեն:

Նրանց պատասխանը հաստատվում է հանելուկի հակառակ երեսին պատկերված եգիպտացորենի նկարի ցուցադրումով: Հարցնում ենք , թե ինչ գիտեն այս բույսի

մասին: Հետևում են պատասխանները.

- Հացահատիկային բույս է:
- Դրանից ստանում են ալյուր և բուսական յուղ:

_Եգիպտացորենն ուտում են խորոված և եփած վիակում:

_Օգտագործում են աղցանների մեջ:

Պատրաստում են ադի-բուդի:

_Եգիպտացորենի մազիկներն օգտագործում են որպես դեղաբույս:

Հիշեցնում ենք նաև, որ եգիպտացորենի կանաչ զանգվածը բարձրորակ անասնակեր է՝ սիլոս: Եգիպտացորենից ստանում են նաև ձավար: Հայերը եգիպտացորեն մշակել են տասնվեցերորդ դարից:

Այնուհետև մտագրոհի մեթոդով բնութագրում ենք այս բույսը և կազմում բառակապակցություններ:

Ստացված տեղեկություններն ընդհանրացնում ենք T-աձև աղյուսակի մեթոդով՝ ինչ գիտեի և ինչ և ինչ իմացա խորագրերի միջոցով: Եգիպտացորենի պատկերը ևս կախում ենք պարանից:

Կարդում եմ հաջորդ հանելուկը.

Գլխին առած մի մեծ ծառ՝
Շրջում է դաշտ ու անտառ: /եղջերու/
Ամառ, ձմեռ՝ միշտ կանաչ,
Նա մի ծառ՝ մեզ ճանաչ:
Ամեն անգամ նոր տարում
Մեր հանդեսն է զարդարում:
Ես մի ծառ եմ ճանաչում,
Չունի տերև , չունի ճյուղ,
Անհող, անջուր է աճում: /տոնածառ/
Քուրայի մեջ կարմրում,
Իսկ ջրի մեջ սևանում
ՈՒ դարբնի կուռ ձեռքով
Մեզ օգտակար ձև առնում: /երկաթ/
Մերթ կապույտ է նա,
Մերթ գորշ, մերթ ճերմակ,
Աշխարհն է ապրում
Այդ վրանի տակ: /երկինք/
Ծաղիկ եմ ես դաշտային,
Միջուկս՝ նման արևին,
Թերթերս՝ ճերմակ ու նրբին: /երիցուկ/

Այս հանելուկների էլեկտրոնային տարբերակը ստեղծվել է Quizlet հարթակի միջոցով և տեղադրված է classroom հարթակում, որպեսզի կարողանան օգտվել նաև այլ ուսուցիչներ.
https://classroom.google.com/c/MzYwMTM2MzgzMjE3/a/NTQ5OTM1MzQyNzMy/details

Բոլոր հանելուկների պատասխանները ներկայացվում են պարանի հնարով. պարանի վրա կարդում ենք յուրաքանչյուր բառ, կազմում դրանց հնչյունային մոդելը, հաշվում, թե ամեն մեկը քանի հնչյուն ունի: Անվանում ենք ձայնավոր և բաղաձայն հընչյունները: ՈՒշադրությամբ լսելով բոլոր բառերը՝ գալիս ենք ընդհանուր եզրակացության. բոլոր բառերի սկզբում հնչում են նույն երկու յէ հնչյունները: Այստեղ արդեն բացատրում ենք , որ յէ հնչյունը գրվում է մեկ տառով՝ ե: Ե-ն երկհնչյուն տառ է: Երեխաները գրատախտակին գծում են այդ բառերի հնչյունական աղյուսակը.

Հինգ տառ

ե	ղ	ն	ի	կ

Վեց հնչյուն

յ	է	ղ	ն	ի	կ

Հանելուկների միջոցով ձևավորելով երկհնչյուն տառի գաղափարը անցնում ենք նոր դասի հաղորդմանը:

Ե հնչյուն տառի ամրապնդման դասին երեխաները բերել էին բազմաթիվ հանելուկներ, իրենց նկարած պատկերները, գտել ե-ով սկսվող բառեր: Հանելուկներ և նկարներ ունեցող աշակերտներն իրենց աշխատանքը ներկայացրին հեղինակային աթոռին նստած: Այս հնարն օգնում է երեխաներին առավել սահուն արտահայտել իրենց մտքերրը և ավելի արտահայտիչ խոսել:

Առաջին երեխա .

-Ես առաջադրում եմ իմ հանելուկը , իսկ դուք գուշակեք այն.

Ես գործիք եմ աշխատանքի,

Խոտ եմ հավաքում հանդում ու դաշում,

Հավաքում, դիզում երկաթ մատներով:

Երեխան ցույց է տալիս իր նկարած եղանը և կախում պարանից:

Երկրորդ երեխա.

- Թիվ եմ ես կենտ , միանիշ,

Երկուսից՝ մեծ, չորսից՝ քիչ: /երեք/

Երրորդ երեխա.

- Թեև նա չունի ատամ ու բերան,

Բայց քեզ կկծի, թե ձեռք տաս նրան: /եղինջ/:

Հեղինակային աթոռից ելույթ ունեցող երեխաներին խրախուսում ենք աստղիկներով, այնուհետև առաջարկում լուծել խաչբառը՝ առաջադրված հանելուկի պատասխաններով: Իհարկե, բոլոր հարցերի պատասխաններն սկսվում են ե հնչյուն– տառով: Խաչբառը նախապես գծում ենք գրատախտակին գունավոր կավիճներով.

1				ե	ղ	ն	ի	կ	
2			ե	ր	ա	մ			
3	ե	ր	կ	ի	ն	ք			
4	ե	ր	ի	ց	ու	կ			
5	ե	ր	կ	ու					
	6	ե	ր	կ	ա	թ	ու	ղ	ի

Ստանում ենք գաղտնագրի բառը երիցուկ, և պատմում երիցուկի օգտակարության մասին:

Այս ամենից հետո , երբ երեխաները բավականաչափ տեղեկացված են, կազմակերպում ենք խմբային աշխատանք: Ձեռքի տակ ունենք կտրտված պատկերներ՝ երկրաչափական մարմիններ, աստղիկներ, տերևներ և այլն: Յուրաքանչյուր տեսակից կա հնգական պատկեր՝ եռանկյուն, քառակուսի, շրջան, ուղղանկյուն: Դրանք բաժանում ենք երեխաներին , առանձնացնում նրանց չորս համապատասխան խմբերով և տալիս առաջադրանքը: Բաժանում ենք ե-ով սկսվող բառերով պատկերները, որոնց վրա երեխաները կազմում են տվյալ բառի գծային, հնչյունային, վանկային մոդելը, ներկում ձայնավորը և բանավոր ներկայացնում իրենց աշխատանքը: Եռանկյունի խմբին տրվում է ելակի պատկերը:

Նրանք ներկայացնում են ելակ բառի հնչյունային և տառային մոդելը,ձայնավորներն ու բաղաձայնները, վանկային մոդելը:Այսպես մնացած խմբերն էլ ներկայացնում են

եղնիկի, երամի, երկաթի վերաաբերյալ իրենց գիտելիքները և դրանց համար նույնպես կազմում համապատասխան հնչյունատառային մոդելներ:

յ	է	ղ	ն	ի	կ

Հինգ հնչյուն

ե	լ	ա	կ

Չորս հնչյուն

ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՄԵԹՈԴՆԵՐ

Ամենամեծ ստեղծագործողը ժողովուրդն է, ու նրա ամենամեծ ստեղծագործությունը՝ հեքիաթը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Մանկությունը մարդկային կյանքի արշալույսն է՝ միշտ գեղեցիկ, անբիծ, հաշտ ու խաղաղ: Եվ ամբողջ կյանքում մանկության հուշերը մեր ականջին շշնջալու են անմոռանալի մանկական գրականությունը /հատկապես հեքիաթը/ մանկավարժի դաշնակիցն է, փոքրիկի դաստիարակն ու խորհրդատուն: Այն նպաստում է երեխայի աշխարհայացքի հիմքերի ձևավորմանը, բնավորության կազմավորմանը, հարստացնում նրա նախնական գիտելիքները, բառապաշարը, կենսափորձը, հղկում գեղագիտական ճաշակն ու կոփում կամքը:

Հեքիաթը ժողովրդական բանահյուսության հնագույն ժանրերից է և գալիս է դարերի խորքից: Այն, ինչպես և բանահյուսության այլ ստեղծագործություններ, սկզբնավորվել է ժողովրդական զանգվածների մեջ, մշակվել, լրացվել, փոփոխվել, փոխանցվել սերնդից սերունդ և պահպանել պատմական տարբեր ժամանակահատվածների աշխարհընկալման ու կենսահայեցողության հետքերը: Հեքիաթներում ժողովուրդն ամփոփել է իր երազանքները, ձգտումները և իմաստնությունը:

Անսահման տպավորիչ է շվեդացի հայտնի գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Սելմա Լագերլյոֆի կյանքը /1858-1940/: Ս. Լագերլյոֆը ծնվել է Շվեդիայում՝ Մորբակի կալվածատիրական դաստակերտում, երեքամյա աղջնակը կաթվածահար է լինում և տասնհինգ տարի շարունակ գամված մնում անկողնուն: Հետագայում Սելման գրում է, որ ինքը կարողացել է ապրել տատիկի՝ իր կյանքի համար պայքարի ու տառապանքների շնորհիվ: Նա չէր հեռանում անկողնուց և սփոփում էր իր հրաշալի հեքիաթներով: Հենց այդ կախարդական աշխարհն էլ ուժ ու կորով է տալիս նրան, զսպում, որ չարտասվի, կախարդական պատմություններն ու իրենց հին տան լեգենդները… Հիշում է, թե ինչպես տատն ամբողջ գիշեր մատնոցի մեջ կաթ էր լցնում տան ոգու համար: Հիվանդ թոռնիկին համոզում էր՝ չվախենալ ձայներից, քանի որ իրենց տան ոգին ամենաբարին է, և կպահպանի իրեն:

Մանկության տարիներին լսած կախարդական հեքիաթները տվեցին իրենց անմահական պտուղները: Իր արտասավոր ու հանճարեղ գործերի համար 1909 թվականին գրողն արժանացավ Նոբելյան մրցանակի : Նա թոշակ էր ստանում Օսկար երկրորդ թագավորից և դրամական օգնություն ՝ Շվեդական ակադեմիայից:

Հայ ժողովրդական բանահյուսության /ինչպես մյուս ժանրերի, այնպես և հեքիաթների/ հավաքման ու
հրատարակման գործում մեծ ծառայություն են մատուցել հայ գրողները: Պատահական չէ, որ մանկագիր Սուրեն Մուրադյանը գրում է . «Մանկական իսկական, կատարյալ ստեղծագործությունն այն պատուհանն է, որից ճառագայթած լույսը ջերմացնում է մանուկ ընթերցողին, ձևավորում նրա հոգին: Այդ լույսն է օգնում մանուկ ու պատանի ընթերցողին՝ տեսնելու,ընկալելու աշխարհի երևույթները, առարկաները, ընթերցողի առջև բացում կյանքում շիտակ ու ազնիվ քայլելու կանաչ ճանապարհ »:

Անփոխարինելի է հեքիաթների դերը նախադպրոցական տարիքի երեխաների լեզվամտածողության, ստեղծագործական երևակայության զարգացման առումով: Մանկական ստեղծագործություններ ընտրելիս անպայման անհրաժեշտ է հաշվի առնել դրանց գրական-գեղարվեստական արժանիքներն ու առանձնահատկությունները: Միայն այս դեպքում տվյալ ստեղծագործությունը երեխայի համար դառնալու է ուժեղ ու կայուն ներշնչման աղբյուր: Փոքրիկի համար ամեն ինչ պետք է լինի զարմանալի , հրաշալի, հեքիաթային, ոչ հասարակ: Երեխաների մեջ ազնվություն և ճշմարտախոսություն, բարոյական որակներ ձևավորելու նպատակով անհրաժեշտ է նրանց ուշադրությանը ներկայացնել և՛ դրական, և՛ բացասական գործող անձեր պատկերող գեղարվեստական ստեղծագործություններ:

Ս. Մուրադյանն իր «Բանի դրին ՝ փախավ , հաց դրին՝ հասավ» հեքիաթում աշխատասիրության գովքն է անում.

Միշտ անպատիվ ու սևերես,
Այս երկու ծույլ մկնիկի պես:

«Մկնիկի հարսնացուն» հեքիաթի միջոցով Ս. Մուրադյանը դատապարտում է ծուլությունը, աշխա-

տանքից խուսափելու հակումը:

Վ. Վարդանյանի « Համերաշխ կոլեկտիվ» հեքիաթի շնորհիվ երեխաները հասկանում և գիտակցում են, որ կյանքում աշխատանքն է հզոր շարժիչ ուժը: «Չար ուլիկը» հեքիաթը երեխաների մեջ դաստիարակում է ծնողասիրություն:

Բա չես խղճում
Քո այծ հորը,
Մի քիչ գոնե
Նստիր կողքին,
Տաք աղյուս դիր:

Այս տարիքում երեխաներն առավել հուզական են և ապրում են հեքիաթների հերոսների կյանքով: Մանկաապարտեզի ո՞ր դաստիարակը չի տեսել երեխաների աչքից հոսող արցունքները, երբ ուզում էին մորթել Ախպեր Գառնիկին: Չորսամյա Աշոտիկն աչքերն ամուր փակել էր և ամուր բռնել մոր թևից, երբ նա հեքիաթ էր պատմում : Երբ նրան հարցրին.

Որ ձիուց վայր չընկնեմ, պատասխանեց փոքրիկը: Նա ձուլվել էր հեքիաթի հերոսին և իրեն թվում էր ՝ ինքը ձիով սլանում: Անառարկելիէ, որ հեքիաթը երեխաների ամենասիրած ժանրն է:

«Հեքիաթը սուտ, բայց խրատող , ջահելներին դաս լինի թող» այսպես էր գրում մեծն Պուշկինը: ՈՒսումնասիրություններից պարզել ենք՝ շատ դասվարներ դժգոհում են , որ երեխաներն անքան էլ չեն սիրում հեքիաթներ լսել: Մերօրյա երեխաներին ավելի շատ հետաքրքրում է համակարգիչը, տեխնիկան: Այսօրվա սերունդն էապես տարբերվում է նախորդներից: Հետևաբար՝ ինչ-որ բան պետք է փոխել ուսուցման մատուցման մեջ: Արդի մանկավարժության գերխնդիրներից է ուսուցման ակտիվացման և արդյունավետության բարձրացման նոր եղանակների որոնումը: Իսկ դրանց կիրառումը հարկավոր է սկսել ամենավաղ տարիքից: Այս խնդրի լուծման երկարատև գործընթացին ձեռնմուխ է եղել համաշխարհային մանկավարժությունը:

Ռեջիո- Էմիլիայի /Իտալիա/ մանկական նախադպրոցական հիմնարկներում է ծնունդ առել պատմելու խաղը. երեխաները հերթով կանգնում են մի բարձրության վրա /այն ծառայում է որպես ամբիոն/ և հատակին նստած ընկերներին պատմում իրենց հորինած պատմությունները: ՈՒսուցիչը գրի է առնում դրանք, իսկ երեխան

հետևում է, որ նա ոչինչ բաց չթողնի ու չփոխի: Հետո երեխան իր պատմածը պատկերում է մեծ նկարով:

Հետաքրքիր մեթոդներից է նաև հեքիաթների «աղավաղումը».

_Լինում է՝ չի լինում մի աղջիկ : Նրա անունը Դեղին Գլխարկ է:

Ճի՛շտ է ,նրան մայրիկը կանչեց ու ասաց.

_Լուի

_Եվ այսպես շարունակ:

Շուռ տված հեքիաթներ: Հեքիաթների «աղավաղման» մի տարբերակ էլ հեքիաթի թեման «շուռ տալն է»: Մատնաչափիկը եղբայրների հետ պայմնավորվել էր տնից փախչել , խեղճ ծնողներին թողնել , սակայն նրանք հեռատես էին. նրա գրպանը ծակում են, մեջը բրինձ լցնում : Այն քիչ-քիչ թափվելով նրանց «հուշում է» փախուստի ամբողջ ճանապարհը…

Ձյունանուշիկը թավ անտառում ոչ թե յոթ թզուկների, այլ յոթ հսկաների է հանդիպում և նրանց ավազակային հարձակումների մասնակիցը դառնում…:

«Հեքիաթը շուռ տալու» մեթոդը նոր մտահղացումների է հանգեցնում: Այն հարմար է տվյալ նյութը ծաղրապատճենելու և ունկնդրին զվարճություն պատճառելու իմաստով: Միևնույն ժամանակ թեման ցանկացած ուղղությաամբ ինքնուրույնաբար զարգացնելու և ստեղծագործելու հնարավորություն է ընձեռնում:

Առավել հետաքրքիր մեթոդ է «Հեքիաթների շիլափլավը» :

-Անտառում Կարմիր Գլխարկը հանդիպում է Մատնաչափիկին ու նրա եղբորը:

«Հեքիաթների շիլափլավի» առաջին նշանները կարելի է տեսնել որոշ մանկական նկարներում, որոնցում գերբնականորեն հաշտ են ապրում տարբեր հեքիաթների հերոսները:

Այս մեթոդն օգտագործել են շատ մայրեր , երբ հեքիաթներից «չկշտացող» իրենց փոքրիկները նորանոր պատմություններ են պահանջել: Նրանք ինքնաբարեբար հնարաստեղծել ու երեխաներին մատուցել սեփական հորինվածքների տարբերակներ: Այս մեթոդները նպաստում են երեխայի խոսքի, մտածողության և երևակայության զարգացմանը:

Իր «Մտածողությունը և խոսքը» աշխատության մեջ Լ.Վիգոտսկին գրում է. «Մտածական գործունեությունը՝ երեխայի և նրա ծնողների միջև, բառերով

արտահայտվող կամ շարժողական երևակայությունից է սկսվում: Ինքնուրույն մտածողությունն այն ժամանակ է սկիզբ առնում, երբ երեխան զրույցներն առաջին անգամ կարողանում է ըմբռնել և հասկանալ»:

Հաճախ է օգտագործվում կիսատ թողած պատմության կամ հեքիաթի շարունակում մեթոդը, որը խթանում է երեխաների ստեղծագործական երևակայությունը: Օրինակ՝ երեխաներին անչափ դուր եկավ ներկայացված ամերիկյան «Ասպետն ու վիշապը» հեքիաթը:

Կար-չկար մի ասպետ կար, որն ապրում էր քարանձավում:նա երբեք ոչ մի վիշապի հետ չէր կռվել: Կար- չկար մի վիշապ կար, որն ապրում էր քարանձավում : Նա երբեք ասպետի հետ չէր կռվել: Մի օր ասպետը դղյակի գրադարանում գտավ մի գիրք, որը վերաբերում էր վիշապների հետ կռվելու արվեստին: Այնտեղ կար մի վերնագիր,որը «հուշում էր» , թե ինչպես է հնարավոր կռվել վիշապների հետ: Վիշապը փորփրեց, քարանձավում գտավ մի գրքույկ, ուր գրված էր, թե ինչպես պետք է կռվել ասպետի դեմ: Ասպետը գտավ մի գիրք՝ «Զրահի պատրաստում» վերնագրով:

Վիշապը գտավ մի գիրք՝ «Պոչը ճիշտ շարժելու» արվեստը: Վիշապը փորձում է պոչը ճիշտ շարժել: Այդ ժամանակ դղյակում ասպետը զբաղվում էր զենք ու զրահ պատրաստելով: Ասպետը և վիշապը միմյանց նամակ գրեցին:

Կիսատ թողնելով հեքիաթը՝ երեխաներին առաջարկել է շարունակել իրենց տարբերակը: Դասվարը և խմբի երեխաները միմյանց լրացնելով շարունակում են:Այն ստացավ հետևյալ տեսքը.

Զենք ու զրահը հագած՝
Ասպետն ելավ ընդառաջ:
Գլուխն օրորելով ,պոչը շարժելով
Վիշապն է գալիս՝ հողը փորելով :
Ասպետն ասես մի մժեղ,
Վիշապն էլ՝ մի հսկա լեռ:
Սուրը օդում ճոռում է
Մեր քաջարի ասպետը,
Պոչն անընդհատ շարժում է
Մեր վիթխարի վիշապը:

Վերջը հուսահատվեցին

ՈՒ մի լավ ծիծաղեցին:

ՈՒ ասացին մեկ-երկու,

-Էլ չենք կռվի ես ու դու:

Ներկայացնենք ևս մի տարբերակ: Մեկ այլ խմբում դասվարը և երեխաները ասպետի և վիշապի վեճը լուծում են հնարամտությամբ: Երբ ասպետը և վիշապը հանդիպեցին, ոչ մեկը մտադիր չէր կռվելու: Վիշապն առաջարկեց մի հանելուկ, որը լուծեց ասպետը: Նրանք դարձան լավ բարեկամներ:

Մեկ ուրիշ խմբում դասվարը և երեխաները լավատեսորեն ավարտեցին հեքիաթը: Երբ սարի գլխին ասպետն ու վիշապը դուրս եկան կռվի ,հանկարծ ամպրոպ սկսվեց: Երբ ամեն ինչ խաղաղվեց, դուրս եկավ արևը, յոթնագույն ծիածանը: Ասպետի դիմաց կանգնել էր մի չքնաղ արքայա-դուստր , որն ասպետի հարսնացուն էր:

Իսկ ինչպե՞ս է ավարտվում հեքիաթը բնագրում .

_Վիշապն ու ասպետը չեն ցանկանում կռվել: Նրանք կարող են դառնալ լավ ընկերներ: Նրանք որոշում են մի խորտկարան բացել: Վիշապն իր բերանից կրակ ժայթքելով ՝ խորոված էր անում: Ընկերները շատ համերաշխ աշխատում են:

Մանկավարժի առաքելությունն է՝ հասնել այն բանին ,որ երեխան կարողանա հասկանալ գնահատել հեքիաթի էությունը, փորձի տեսնել իրական կյանքում հեքիաթների հերոսներին, տարբերել բարին ու չարը, դառնալ բարու կրողը և միշտ հավատալ նրա հաղթանակին:

«Ոչ թե խրատել, ոչ թե սովորեցնել , այլ խաղալ ու ստեղծագործաբար աշխատել, երևակայել, հորինել հեքիաթներ, բանաստեղծություններ, հանելուկներ ու պատմություններ: Ստեղծագործության հետ շփումը երեխային արդարև կարևոր , մարդուն անհրաժեշտ շատ ու շատ բան է տալիս, անգամ , եթե նա չի պատրաստվում ապագայում գրող , երգահան կամ նկարիչ դառնալ» /Անատոլի Ալեքսին/:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մայրենիի դասընթացում իրենց ուրույն տեղն են գրավում ինքնուրույն ընթերցանության դասաժամերը: Մի կողմից ՝ այդ դասաժամերի ընթացքում զարգանում են աշակերտների ընթերցողական հետաքրքրությունները, աշխարհայացքը, գեղագիտական ճաշակը, գեղարվեստական պատկերավորման միջոցների ընկալումը, երևակայությունը և ստեղծագործական միտքը, մյուս կողմից՝իրագործվում են ծրագրային, չափորոշչային պահանջները, ձևավորում են ակտիվ ընթերցողին անհրաժեշտ կարողունակություններ:

Երկրորդ դասարանում ինքնուրույն դասաժամերը անցկացվում են շաբաթական մեկ ժամ,իսկ երրորդ և
չորրորդ դասարաններում նախընտրելի է դրանք անցկացնել երկու ժամ , սակայն երկու շաբաթը մեկ,որպեսզի երրորդ և չորրորդ դասարանի աշակերտներն ավելի շատ ժամանակ ունենան ընթերցելու ծավալուն նյութեր, ինչպես նաև կարողանան երկու դասաժամում քննարկել դրանք:

Ինքնուրույն ընթերցանության դասերն ունեն որոշակի առանձնահատկություններ, առանց դրանց հաշվառման հնարավոր չէ իրականացնել առաջնային խնդիրները: Ինքնուրույն ընթերցանության դասերն առավել լայն պայմաններ են ստեղծում ստեղծագործական բնույթի աշխատանքների համար /ընթերցածի բովանդակության նկարագարդում /բառային և գրաֆիկական/, ապլիկացիա, ծեփակերտում,ստեղգործության ներկայացում՝ երաժշտական ձևավորմամբ , նկարաշարի ստեղծում և այլն/:

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի նկատմամբ հետաքրքրությունը խորացնելու, այդ դասաժամերն ավելի հետաքրքրաշարժ դարձնելու նպատակով կարելի է կազմակերպել ոչ ստանդարտ կառուցվածքով դասեր /դաս-հեքիաթ, դաս-ցերեկույթ, դաս-ճանապարհորդություն , դաս-մրցույթ, դաս-հանդիպում և այլն/: Ինքնուրույն ընթերցանության դասաժամերի ընթացքում իրականացվում է ուսուցանող գնահատում: Կարելի է կիրառել ուսուցանող գնահատման իրականացման նպատակով օգտագործվող համարյա բոլոր աշխատանքների ձևերն ու տեսակները՝ կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանքներ,

բանավոր հարցում , տնային առաջադրանք, համագործակցություն, նախագիծ, ինքնուրույն կատարման ուսումնական առաջադրանք, բաց հարցերով քննարկում , ինքնագնահատում և փոխադարձ գնահատում, ու գործնական աշխատանք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայ ժողովրդական հեքիաթներ, 1959:

2. Նախադպրոցական մանկավարժություն, 1966:

3. Ջանի Ռոդարի, Ստեղծագործական երևակայության քերականություն,Երևան 1995:

4. Նախաշավիղ, 2004, 5-6: